ԳԼՈՒԽ ՆԶԳ.

Ամենայն իշխան որում աստիճանի որ իցէ եթէ ապստամբեսցի ընդ դէմ տանն և օրինացն հայոց՝ ինքն համակցօք իւրօք մահու մեռցի, և որդիք նոցայ մի՛ մտցէ ոչ ոք պաշտօն իշխանութեան մինչև եօթն ցեղն սերնդոց։

ԳԼՈՒԽ ՆԶԵ.

Ամենայն իշխան որում աստիճանի որ իցէ եթէ դատեսցէ ոք ինքնակալ կամօք ընդդէմ Օրինաց անկցի իշխանութենէ և դատաստան յանձն առնու 'ի վերայ իւր, ըստ Օրինօք։

ԳԼՈՒԽ ՆԶԶ.

Ամենայն իշխան եթէ 'ի կարգէն զինուորաց, և եթէ կառավարիչ աշխարհի յանդգնեսցի հրամանի տանուտերաց տանն հայոց, իսկոյն անկցի 'ի իշխանական ազատութենէ և կալանաւորեալ լինիցի 'ի կուսակալէ և երկրորդէ իւրմէ արկաթակապ մտցի 'ի բանտ և ընդունեսցի դատաստան ըստ Օրինօք, և հատուցանէ անձամբ վնասն յանդգնութեան իւրոյ մինչև 'ի մահ։

ԳԼՈՒԽ ՆԶԷ.

Զինուոր գիշերապահ եթէ 'ի ժամ պաշտման քնեսցի, պատժեսցի։